Կարծիք

ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Գոռ Էդվարդի Պետրոսյանի «Պատժամիջոցների դերը գլոբալ և տարածաշրջանային քաղաքական գործընթացներում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Գոռ Պետրոսյանի ատենախոսական հետազոտության թեման բավականին արդիական է, քանի որ պատժամիջոցները արդի աշխարհակարգի պայմաններում հանդիսանում են գլոբալ քաղաքականության իրականացման կարևորագույն մեխանիզմներից մեկը: Պատժամիջոցների կիրառման քաղաքական գործոնների և դրանց կիրառման արդյունավետության քաղաքատնտեսական փոփոխականների ուսումնասիրությունը արդի քաղաքագիտական կարևոր ենթադիսցիպլին է: Բացի տեսական կարևորությունից, պատժամիջոցների հետազոտությունն ունի նաև կարևոր կիրառական նշանակություն Հայաստանի Հանրապետության անվտանգային համակարգի ապահովման համատեքստում: Ավելի քան երեք տասնամյակ Թուրքիան և Ադրբեջանը Հայաստանի նկատմամբ վարում են տնտեսական բլոկադայի քաղաքականություն: Տնտեսական շրջափակման քաղաքական նպատակների ու դրա ազդեցության ուսումնասիրությունն ունի կարևոր նշանակություն Հայաստանում քաղաքականության մշակման համար: Բացի այդ, ատենախոսական հետազոտության արդիականությունն ու կիրառականությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ Հայաստանի անվտանգային համակարգի համար ռազմավարական կարևորություն ունեցող Ռուսաստանն ու Իրանը գտնվում են պատժամիջոցների թիրախում, ինչն առանցքային ազդեցություն է թողնում տարածաշրջանային ռազմաքաղաքական ճարտարապետության վրա:

Գոռ Պետրոսյանի ատենախոսական հետազոտությունում պատշաճորեն ներկայացված է թեմայի գիտական մշակվածությունը, թեմայի վերաբերյալ ակադեմիական բանավեճի շրջանակն ու նոր հետազոտական աշխատանքի անհրաժեշտությունը: Ատենախոսության երկրորդ և երրորդ գլուխներում հեղինակը օգտվել է նաև բազմաթիվ սկզբնաղբյուրներից: Գոռ Պետրոսյանի ատենախոսական աշխատանքում ըստ պատշաճի սահմանված են հետազոտության օբյեկտն ու առարկան, նպատակն ու խնդիրները: Ատենախոսությանը բնորոշ է

տրամաբանական հետևողականությունը, փաստերի գրագետ ներկայացումը և եզրակացությունների վավերականությունը:

Աշխատանքը կառուցված է տեսամեթոդական հարուստ բազայի վրա: Հետազոտական աշխատանքի շրջանակներում հեղինակն օգտագործել է մի շարք որակական մեթոդներ, ինչպիսիք են՝ Փաստաթղթերի բովանդակային վերլուծության մեթոդը (content analyses), քաղաքական դերակատարների ելույթների խոսույթային վերլուծություն (discourse analyses), Համեմատական վերլուծության մեթոդը, ինդուկցիայի, դեդուկցիայի, համանմանության, ինչպես նաև քաղաքագիտության համեմատական մեթոդները: Ատենախոսությունում շրջանակներում հեղինակը կիրառել է նաև քանակական մեթոդներ ինչպիսիք են՝ առևտրատնտեսական տվյալների և սոցիալական հարցումների արդյունքների վերլուծությունը: Որպես ատենախոսության տեսամեթոդական բազա հիմնականում գործածված են նեոռալիզմի և կոնստրուկտիվիզմի մոտեցումները:

Աշխատանքի շրջանակում ատենախոսին հաջողվել է լուծել առաջադրված հետևյալ հիմնարար խնդիրները

- Հստակեցվել է պատժամիջոցների քաղաքագիտական տեսահայեցակարգերը, ձևակերպելով միջազգային հարաբերություններում կիրառվող «պատժամիջոց» եզրույթի համար ունիվերսալ սահմանում, որը լրացնում է թեմայի մասին քաղաքագիտական գրականությունում առկա բացը:
- Վերլուծվել է Ռուսաստանի Դաշնության նկատմամբ կիրառվող պատժամիջոցների քաղաքական տրամաբանության տրանսֆորմացիան ու ազդեցությունը գլոբալ քաղաքական գործընթացների վրա
- Ուսումնասիրել Հայաստանի և Հայաստանի համար ռազմավարական կարևորություն ունեցող պետությունների նկատմամբ կիրառվող պատժամիջոցներն ու վերլուծել դրանց ազդեցությունը:

Ատենախոսությունն ունի նաև գիտագործնական նշանակություն: Հետազոտական աշխատանքի արդյունքները կարող են օգտակար լինել քաղաքագիտական և միջազգային հարաբերությունների գծով, Հարավային Կովկասի, Ռուսաստանի և ԱՄՆ-ի քաղաքականությամբ զբաղվող հետազոտողների համար ոչ միայն Հայաստանում, այլև դրա սահմաններից դուրս: Աշխատանքի առանձին հատվածներ կարող են նաև կարևոր նշանակություն ունենալ քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների ուսանողների և դասախոսների համար, ինչպես նաև օգտագործվել ուսումնական գործընթացում

Ատենախոսության շարադրման լեզուն և ոճը լիովին համապատասխանում են պահանջվող մակարդակին: Աշխատանքն աչքի է ընկնում հետազոտական հիմնահարցերի շարադրման հետևողականությամբ, հմտությամբ ու տրամաբանական հաջորդականությամբ: Համապատասխան խնդիրներ ձևակերպելու, դրանց համապատասխան մեթոդներ գործադրելու և եզրահանգումներ կատարելու՝ ատենախոսության մեջ դրսևորված մշակույթը վկայում է ատենախոսի գիտահետազոտական աշխատանքներ կատարելու՝ ձևավորված կարողությունների մասին:

Այդուհանդերձ, ատենախոսությունում առկա են նաև որոշ թերություններ.

1/ Թեմայի մշակվածության աստիճանի վերաբերյալ շարադրանքում անդրադարձ չկա երրորդ գլխի՝ Հայաստանի վրա ազդեցության հանգամանքին, այսինքն՝ ներկայացված ու վերլուծված չէ այն գրականությունը, որը ուղղակի կամ անուղղակի վերաբերում է պատժամիջոցների՝ Հայաստանի վրա ազդեցության խնդրին:

2/ Սահմանափակ անդրադարձ է կատարել Թուրքիայի և Ադրբեջանի կողմից Հայաստանի ապաշրջափակման տնտեսագիտական ոլորտի հետազոտություններին:

3/ Ցանկալի կլիներ ատենախոսական հետազոտության ընթացքում նաև ներառել դաշտային աշխատանք, ինչպիսիք են խորքային հարցազրույցները թեմային առնչվող ոլորտներում պրակտիկ աշխատանքներ իրականացնողների և փորձագետների հետ:

4/ էջ 51-ում հեղինակը նշում է, որ «Պատժամիջոցների կիրառումը կարող է կրել նաև գաղափարական բնույթ, երբ պետության քաղաքական էլիտան կիրառում է պատժամիջոց գաղափարական հակասությունների պատճառով», և որպես օրինակ բերում Ղրիմյան ճգնաժամից հետո Մերձբալթյան պետությունների կողմից ՌԴ-ի նկատմամբ կիրառվող պատժամիջոցները: Հեղինակը դրանց գաղափարական բնույթ ունենալը պատճառաբանում է նրանով, որ Մերձբալթյան կառավարությունները այդ քայլին էին գնացել, ի հեճուկս նրան, որ դա վնասում էր իրենց իսկ գյուղատնտեսությանը: Թեև ընդունում ենք հեղինակի կողմից կատեգորիզացման նման ընտրությունը՝ հաշվի առնելով կառավարությունների կողմից հասարակական տրամադրությունների տեղի տալու շարժառիթը, սակայն նման կատեգորիզացումը անտեսում է այդ պետությունների որոշման մեջ, ըստ իրենց, ռեալիստական շարժառիթն ու շահը, որը կայանում է սեփական դաշինքի ամրապնդման և այդ դաշինքի միջոցով ուժերի հավասարակշռության մեջ ավելի բարենպաստ դիրք գրավելու ակնկալիքի մեջ:

5/ Քանի որ ՌԴ-ի կարողությունների զարգացման կամ պահպանման հարցում կենսական և կենտրոնական են գազի և նավթի արտահանումները եվրոպական շուկա, ապա աշխատությունը կշահեր, եթե անդրադարձ կատարվեր ԵՄ-ի կողմից դրանց ներկրումը իրականում սահմանափակող միջոցների ընթացքին: Իհարկե, այս նկատառումը կատարում ենք մեծ վերապահումով՝ ընդունելով գործընթացների թարմությունը՝ և հեղինակի կողմից դրանց անդրադառնալու անհնարինությունը կամ աննպատակահարմարությունը՝ դեպքերի զարգացմանը զուգահեռ:

Այս թերությունները, սակայն, չեն զցում Գոռ Էդվարդի Պետրոսյանի «Պատժամիջոցների դերը գլոբալ և տարածաշրջանային քաղաքական գործընթացներում» թեմայով ատենախոսության գիտական արժեքը և այն լիովին համապատասխանում է ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու ատենախոսություններին առաջադրվող պահանջներին և հեղինակն արժանի է իր հայցած գիտական աստիճանին:

Քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Մարգարով

Ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտական, քարտուղար, բ.գ.թ. Մ. Հովհաննիսյան

«14» փետրվարի 2023